## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» փետրվարի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն, «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի, «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ-ի, «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ի, «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

**1-ին, 2-րդ, 6-րդ, 22-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

**3-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ին:

**5-րդ, 17-րդ, 19-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ-ին:

**7-րդ, 23-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին:

**9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ-ին:

1-ին, 2-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ-ին:

3-րդ, 5-րդ, 7-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

17-րդ, 19-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ին:

22-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին:

23-րդ չափաբաժնի մասով ներկայացրած այլ գնային առաջարկներ չկան:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Տեղեկատվություն՝ ընթացակարգը 4-րդ, 8-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.**

3.1 12-րդ, 21-րդ չափաբաժինների մասով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Քանի որ 12-րդ չափաբաժնի մասով «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի և ինքնարժեքի նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի հանրագումարը, 21-րդ չափաբաժնի մասով «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի, «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ-ի, «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում ինքնարժեքների և ինքնարժեքների նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի հանրագումարները ևս գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ նշված չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ չեն վարվի:

3.2 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 24-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 12-րդ, 21-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում), 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 24-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն (ոչ մի հայտ չի ներկայացվել):

**4. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. մարտի 01-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Հանձնաժողովը որոշեց.**

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 4-րդ, 8-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

**-Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մարտի 03-ին, ժամը 10:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Վլադա Արզաքանյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 4-ՐԴ, 8-ՐԴ, 12-ՐԴ, 13-ՐԴ, 14-ՐԴ, 20-ՐԴ, 21-ՐԴ, 24-ՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի փետրվարի 23-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-03/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 4-րդ, 8-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| Չափաբաժին | Գնման առարկայի համառոտ նկարագրություն | Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում | Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝”Գնումների մասին” ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/ | Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|
| 4 | Մաքրող դանակ | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 8 | Մաքրող դանակ | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 12 | Լիցքավորման գլան | «ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | պայմանագիր չի կնքվում |
| 13 | Լիցքավորման գլան | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Լիցքավորման գլան | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 20 | Լիցքավորման գլան | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |
| 21 | Լիցքավորման գլան | «ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ<br>«ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ» ՍՊԸ<br>«ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ<br>«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | պայմանագիր չի կնքվում |
| 24 | Լիցքավորման գլան | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**